



ՀԱՅԿԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԲԱՆԱՍԵՐԱԿԱՆ

ՇՐՋԱՆ ԱՌՁԱՄԱՌԱՅ

Ա. ՏԱՐԻ. Բ. ՀՐԶԱՆ

1862

Թ. Ի. 17. Հ. ՈՎՏԵՄԲԵՐ 5

Հրատարակի ամիսը երկու անգամ. - Վեցամսեայ գինն է 5 ֆրանկ. - Իջմիրեն գուրս 6 ֆ. - Մեծաք նույնի կամ ծրար չցնդուեալի. - Կ'ստորագրուի Իջմիր՝ Ճաղիկի գրասենեակը. Կրիթ Խան. - Իջմիրեն գուրս Մեծաքգոյ գործակաշներն են, Կ Պոզիս, Խ. Թ. Գաշեկեան. և Գր. Վ. Աշեկեան. Գաշեկեան Խան Թիւ. 4. - Հաշեյ, Յ. Ս. Քիւրքճեանօֆ. - Փարի, M. A. Mourad, Rue du Dragon, 6.

ՈՂԻՆ ՀԱՅԵԱՏԵՆԵԱՅՅ

ԱՌ

ՀԱՄՕՐԻՆ ՀԱՅԿԱԶՈՒՆՍ

ՅՕԴՈՒԸՆ Գ.

Միացե՛ք, Հայեր,

Միութիւնն է մայր բարեաց
Անկախութիւն ծնող շարեաց:
ԵՂԵԸ:

Եկէ՛ք մտքի զօրութեամբ օդոյն մէջ բարձրանա՛ք և գէտ 'ի Արեւելեան գին ընթանա՛ք, այնտեղ աչքերնուս առջև լեռներ, ձորեր, դաշտեր, մարդեր, քաղաքներ, գիւղեր, պարտէզներ, անասուններ և վերջապէս մարդեր պիտի տեսնենք: Եւ այնչէ՛ք սա լեռին ստորոտը եղած դաշտերուն ամայութիւնը, անմշակութիւնը և անբնակութիւնը: Տեսէ՛ք որչափ հազարաւոր մղոն տեղեր աւերակ և անպտուղ մնացեր են. որչափ բազումներու աշխատութեանց հարկաւորութիւն ունեցող արեւակէղ պարսպ դաշտեր և ձորեր: Դիտեցէ՛ք այս կողմը որչափ լեռներ, ձորեր, դաշտեր անմարդի իբրև ի սուգ համակեալ լոյի միջիկ ժամանակին ձեռքը յանձնուած են: Եւ այնչէ՛ք միւս կողմը որչափ աւերակ դարձած քաղաքներու և գիւղերու տեղեր, որոնք անբնակ ի մարդկանէ՛ սողուններու և գաղանձերու որջեր եղած են: Տեսէ՛ք որչափ շէնքեր, հսկայադռն շէնքեր, յեղիկի կործանած են, որչափ հինգրեայ գեղեցիկութիւններ և հրաշալիքներ հարթ յատակ եղած: Ինչո՞ւ արդեօք այն տեղերը, այն դաշտերը, լեռները, ձորերը, և այլն անմշակ և ամայի մնացեր են: Ինչո՞ւ համար այնչափ տեղեր Աշխարհ սերունդէ զրկուած են հի-

մայ, ո՞ւր երբեմն, ինչպէս կերևի, մարդերու բազմութեանց կայարան և երևելի Ազգի մը օրբան եղած էր: Ինչո՞ւ այն տեղերը 'ի սուգ համակեալ կարծես թէ կողքան իրենց տխրադգած ներկային վերայ, որոնց անցեալին փառաւոր լինելը յայնապէս կերևի՝ իրենց արտաքին երևոյթը դիտելով: Ինչո՞ւ արդեօք այնչափ հսկայադռն շէնքեր, քաղաքներ և այլն աւերակ դարձած և անմարդացած են: Ինչ է այս ողբալի տեսարաններուն պատճառը. — Ո՛չ ապաքէն առեւտրութիւնն, օտարասիրութիւնն ու անմիութիւնն է:

Թողմբ այս 'ի մի կողմ և եկէ՛ք դարձեալ իմաստին թուինք մեր մտքի սրածուխ թեւերովը գէտ 'ի Արեւմտեան գին. . . Տեսէ՛ք սա արդասաւոր և ստղաբեր դաշտերը, լեռները, ձորերը: Եւ այնչէ՛ք սա բազմամարդ քաղաքները, հսկայաշէն շէնքերը, այլ և այլ մարդօգուտ հաստատութիւններու բարեկարգ և մեծադործ շէնքերնուս: Ինչ է ասոնց պատճառը. — Ո՛չ ապաքէն միութիւնը, աշխատասիրութիւնն ու հայրենասիրութիւնը:

Այս մեծ տեսարաններէն հեռանալով՝ սա երկու դաշտերը նկատենք:

Եւ այնչէ՛ք սա Հարաւային կողմի դաշտը և անոր մէջի ժրջան և դործունեայ աշխատաւորները. ինչպէս կը սիրեն աշխատութիւնը, և Վերդիլիոսի ըսածին համեմատ՝ Աշխարհ-Ի-ն յաղթող է ամենայնի ըսելով՝ բա՛հ 'ի ձեռին կաշխատին կը տքնին՝ իրենց դաշտը մշակելու, բարեբեր ընելու և իրենց ներկայ և ապագայ երջանկութիւնը ձարելու համար: Տեսէ՛ք ինչպէս միաբան աշխատութեամբ քիչ ժամանակուան մէջ որչափ դործ տեսան, և որչափ տեղեր մշակութեան բերատեսակ օգուաներով ճախացած են և այսպէս եթէ շարունակեն իրենց անբուն աշխատութեան և սիրալիր միութեան պտուղը

խիստ դոճ սրտիւ պիտի վայելեն : Ի՞նչ է ասոր պատճառը . — Աշխատաւորներուն միութիւնն ու սէրն է :

Պիտեցէք Հիւսիսային կողմի դաշտը ևս և անոր աւերակ վիճակը , անմշակ կայութիւնը և ամայութիւնը : ‘Կայեցէք մէջի անձերը ինչպէս անհոգաբար առանց դործելու և առանց աշխատելու կը խորդան . վայրկեանները կանցնին կերթան , օրերը իրարու կը յաջորդեն և տարիները Յաւիտեանականութեան անելանելի բաւիղին մէջ կը կորսուին , բայց ասոնց անհոգութիւնը միօրինակ’ Մի անհատ կայ աշխատող’ անոր ալ ձեռքէն բան մի չգար : Ի՞նչ ընէ խեղճը , կաշխատի , կը տքնի , արիւն քրտինք կը թափէ , ընդարձակ դաշտը մըշակելու համար , բայց իւր կարողութենէն բարձր է բոլորը մշակել , այն ժամանակ միայն դործ պիտի տեսնէ և երջանիկ ապագայ մի պիտի պատրաստէ թէ՛ իրեն և թէ՛ իւր անհոգ ընկերներուն , երբոր նոքր ևս’ անհոգութիւնը մի կողմ դրած’ աշխատութեան առատաբուրդ եղջիւրները վայելելու համար միութեամբ ղինուին և մի հոգի և մի սիրտ քրտնին յօգուտ հանրութեան . . . : Բայց նոքա վերջը չեն մտածեր : Յայտնի բան է որ , եթէ այս ընթացքը ունենան շարունակ’ ապագային մէջ հայ չգտնելու դժբաղդութիւնը պիտի ունենան : Միութիւնը չեն սիրեր և անոր օգուտներուն անտեղեկ են : Ան միութեան և անհոգութեան արգիւնք :

Միութեամբ շատ բաներ յառաջ կերթոյ , շատ դործեր զլուս կեննէ , շատ օգուտներ կը մատակարարուի , ինչպէս յայտնի է վերոյիշեալ տեսարաններէն : Միութեան և հոգատարութեան արգիւնքը բազմաթիւ են , անոնցմով մարդ մի իւր ապագայ բարօրութիւնը կը հոգայ և կարգի կը դնէ :

Միութեամբ շատ բարիքներ կը ծաղին : Քիչին կարողութենէն բարձր եղածը’ անով շատը կըրնայ կատարել : Ուրիշ է մի բազուկի զօրութիւնը’ ուրիշ շատ բազուկներու զօրութիւնը : Միութիւնը զօրութիւն յառաջ կը բերէ :

Օրինակ թող լինին “ Երկնից թռչունները , նաև զեռունները’ որ միասեղ ին թռչողն , ին միասնէն համայնութեամբ և միութեամբ ըլլելու համար ինչոր անոց մի չկրնար ըլլել միակ ” : (1)

Այն ժամանակ միայն մարդիկ իրենց իրաւունքը , շահը և օգուտը կրնան բոլորովին ձեռք բերել’ երբոր համամիտ և համասիրտ ի մի վայր ժողովելով , խորհրդակցելով և իրարու օգնելով

սիրով և միութեամբ կատարեն ամենայն ինչ :

Սիրելի Հայկազունք ,

Եկէք քիչ մի ևս Հիւսիսային կողմ երթանք . . . ապահով եմ որ այնտեղի տեսարանները խիստ հետաքրքրութեամբ և մասնաւոր մտադրութեամբ դիտելը ձեզի սրտատաւորութիւն պիտի սեպէք :

‘Կայեցէք սա ընդարձակ և բարձրանիստ քաղաքը , որ եօթնադուիս լերի մի վերայ հաստատւած է : Տեսէք ինչպիսի տխուր լուսթիւն մի է պատեր իւր չորս դին . ուրտեղ մի երկու տարիէ ՚ի վեր’ մինչև այս վերջին օրերո’ հակառակ արգիլ լին կայութեանը’ ամեն դի ձայներով , աղաղակներով օգը կը թնդայր . ուրտեղ , փոխանակ արգի առանձնութեան’ ամեն փողոց և ամեն հրապարակ մարդերու խուռներամ բազմութեամբ լի էր , ամեն դի մարդեր կը վազէին , ոմանք յառաջ , ոմանք ետև , ամենայն ոք կարծես թէ մեծ դործ մի կատարելու համար կը փութայր , իւրաքանչիւր ոք մէյմէկ առիւծ դարձած’ կը գոգար կը մոնչէր ամբարտաւանութեամբ և “ միտքս դրածս անպատճառ ՚ի դրլուս պիտի հանեմ ” կըսէր . ոմանք ալ , տեսնելով որ այս առիւծի նման յոխորտացողներուն ընթացքը իրենց ծանրի պիտի նստի’ ասոնց դէմ իրենց վազրի խորամանկ ճանկերը կը պատրաստէին . . . Վերջապէս ամեն կողմ աղաղակ , ամեն դի շփոթ և ամեն տեղ Բաբելոնեան խառնակութիւն . . . :

Ի՞նչ է այս տխուր լուսթեան պատճառը . պիտի հարցնէք անշուշտ . ուր են այն մեծ քաղաքին առջի բազմութիւնը և ինչ պատճառաւ տեղի ունեցան այն աղաղակը , շփոթն ու խառնակութիւնը .

— ‘Կախ և յառաջ սկսինք անցեալէն , որուն յիշատակը դառն է արդարև , բայց դիտաւր խիստ կարևոր :

Յայտնի է որ Պօլսի Հայկազունք’ երկու տարի յառաջ Ազգային Մասնադրութիւն մի յօրինեցին և ընդհանրական հաւանութեամբ ընդունեցին , ամեն աեսակ Հայ “ անոր պալուստը բարի է ” ըսելով’ զայն սիրով բարեկց , որով անոր դործադրութիւնը սկսաւ . . . և Հայ Ազգին ճշմարիտ Յառաջադիմութեան Արշալոյսը ասոր միջոցաւ ծաղիլը մերձեցաւ . . . բայց աւաղ , դործերը ուրիշ կերպարանք առին : Կարծես թէ Հային ճակատագիրն է միշտ ափսոսալ , ուստի արդի ափսոսալի կայութեան մէջ զլորեցաւ , ցաւալին այն է որ նոյն իսկ Հայ արիւն ունեցող անձերու բախարկութեամբ :

Մինչդեռ Մասնադրութիւնը կրնդունուէր , կը խնկարկուէր և անոր դործադրութեան հոգ կը

(1) Փ . Լաւենէ :

Այս եղելութիւններէ վերջը՝ մեղքացաւ վերին Տեսչութիւնը Հայ Ազգին ներկայ երկցս թշուառ վիճակին վերայ, և լուսաւորեց ամեն տեսակ Հայերու միտքը, արծարծեց անոնց սրտերուն մէջ Ազգասիրութեան բնական զգացումը և անոնց ներքին խորշերուն մէջ Գթութեան կայաբանը շօշափեց և շարժեց։ Ասոր վերայ ամեն կուսակցութիւններ հասկըցան, թէպէտև ուշ, որ իրենց զործածը Ազգին դէմ, Ազգասիրութեան դէմ, Բնութեան դէմ և Արարչին դէմ էր. ամեն մարդ իմացաւ որ զրգուութիւններ հանելով, ատելութեան միջոցներով, աղաղակաւ, շփոթով և խառնակութեամբ՝ շահաւէտ գործ մի կատարուելը անկարելի է. ամեն կողմ զգաց որ Երկպառակութիւնը Ազգին տունը փլատակող հրէշ մի և Հակառակութեան և Ատելութեան Ողիները անոր աւերակները փութացնելու յարմար մեքենայներ են. վերջապէս ամեն անհատ իմացաւ որ Ազգ մի կը յառաջագիւծ մի միայն Միութեան և անոր քոյրերուն, Սիրոյ և խաղաղութեան միջնորդութեամբ։ Ուստի ամեն կուսակցութիւն, ամեն մարդ կը փութայ միանալ, հաշտուիլ իր ազգակից, արեւակից եղբայրը հետ և ընդհանուր Ազգայնութեան համար աշխատիլ, ինչպէս որ իրենց Պարտաւորութիւնը կը պահանջէ։

Եթէ Միութիւն ունենային Հայերը, եթէ կուսակցութեան ողին իր իշխանութեան աթոռը նոցա վերայ դրած չըլինէր, շատ մեծ Յառաջդիմութիւն պիտի ունենային, իրենց Սահմանադրութեան կանոններու զօրութեամբը և հիմայ շատ ազդողուս գործեր զլուխ տարուած պիտի տեսնուէին։

Ինչ էր պատճառը Սահմանադրութեան այսչափ ուշանալուն, բանտարկուելուն և Տէրութեան կողմանէ չվաւերանալուն. — Միթէ Հայոց՝ իրարու դէմ հակառակութեան և ատելութեան ողի տածելը, այլ և այլ կուսակցութիւններու կազմութիւնները, վերջապէս Անմիաբանութիւնն չէր ասոնց պատճառ։

Ինչ բան կը պակասէր Հայ Ազգին եթէ Միութիւն ու Մէր ունենար. — Միթէ անոնցմով չէր կարող իւր ներքին կառավարութիւնը բարեկարգել, և այն Ազգային սքանչելի Սահմանադրութիւնը լուի մնջիկ և խաղաղութեամբ յառաջ տանել, Միթէ Ինչ հարկ կար օրապէս դիմել և Հային ներքին խռովութիւնը անոր յայտնել և անորմէ Ազգին ներքին ցաւերուն դարման խնդրել, մինչդեռ անտեղեակ էր նա Հայ Ազգին ցաւոց և անոր ներքին գործերուն,

և չէր կրնար անոր յարմար դարմաններ դնել, որովհետև Հայ չէր։ Գարձեալ կըսեմ, միթէ Հայ Ազգը՝ կարող չէր միութեամբ և սիրով ամեն բանի յաղթել, ամեն դժուարութիւնները հարթել, վերջապէս Սահմանադրութիւնը, ինչպէս որ պէտք է յառաջ տանել, հեռաւոր դաւառներու ազդայնոց դառնադառն և աղիողորմ վիճակին բարելուութիւնը փութացնել և Ազգին ապագայ բարօրութիւնը պատրաստել։

Ազգասիրաց համար դիտելու արժանի կէտն է Ազգին ներկայ թշուառագոյն վիճակը։ Ընառնութեան և զրկանաց կը զոհեն, Փոքր Ըսիոյ Հայը՝ անհատական և ընտանեկան հանգստութիւն մի չունի, վերջապէս մեծաւ մասամբ Հայ ազգը, կըսեմ, այլևայլ վտանգաւոր դահաւէտներու մերձ կը հեծե՞ծէ՝ հակառակ իւր վերայ իշխող բարեխնամ Կառավարութեան կամաց.

Բայց հիմայ, փոթորիկէ ետք խաղաղ օդ մի տիրածի պէս՝ ամեն խռովութիւններէ և աղաղակներէ ետք՝ համատարած տխուր լուծիւն մի կը տիրէ և երբեմն երբեմն ճշմարիտ Սահմանադրասէրներու և ազատներներու ցաւալի ձայներուն արձագանգները կը լսուին։ Հիմայ ամեն մարդ զգալով որ հակառակութեամբ յառաջ չէր թար Ազգը և օր աւուր մըրկայի ծովու կը դառնայ և Ազգութիւնը կըլի կըստառնայ. հիմայ զգալով, կըսեմ, ամեն ճշմարիտ Հայ սրտերը, Ազգասէր Բարերարի մը միջնորդութեամբ, կուզեն հաշտուիլ, և տխուր լուծիւն մի պահելով՝ Սահմանադրութեան ճակատագրին վերայ կը խորհին։

Հիմայ չեն տեսնուիր հրապարակներու և փողոցներու մէջ այն զրգուեալ բաղմամբ անձերը՝ որոնք ազգային խռովութիւնը աւելի զօրաւոր ընելու կը նպաստէին. չտեսնուիր՝ Պատրիարքարանը բռնութեամբ կոխող այն յուզեալ ամբողջ, որ առանց դիտելու ըրածը զրածը, առանց վերջը մոտածելու գործեց. . . . Կարճօրէն խօսելով՝ չեն տեսնուիր անոնք, հեռացան այն աղաղակները, շփոթն ու խառնակութիւնը և տիրած է հիմայ խաղաղութիւնը, այն Միութեան աւետաբերը և առաջնորդը, և ամեն մարդ խաղաղութեամբ և միութեամբ ձեռք կուզէ բերել իւր փափաքածը. ինչպէս որ խոհեմութիւնն ու ճշմարիտ ազգասիրութիւնն ևս կը պահանջեն։

Տար Երկինք, որ այս Միութիւնը և խաղաղութիւնը յարատեւ ընթացք ունենար և յօգուտ ընդհանրութեան արդիւնք յառաջ բերէր և Ազ-

Ո՛վ կրնայ յանդգնել այսպիսի Տրամաբանութեան դէմ մաքառելու և կամ հաստատելու թէ ճշմարիտ հարաձգաբէն ո՛վ է :

Մենք պիտի ջանանք միայն օրինակաւ մի փորձ փորձել իւր արամաբանութեան ծուռ և սխալ լինելը հաստատելու, և բուն հարաձգաբէն ճշմարիտ հարազատէն զատելու :

Յարդի ընթեցողք. — Հայր մի ունի մէկը, որ արդի լուսաւորեալ զաղափարներու և ներկայ դարուս պահանջած ոգւոյն հակառակ է. իսկ ինքը լուսաւորեալ զաղափարի տէր և ներկայ դարուս Յառաջադիմութեան ոգին պաշտպանողներէն : Արդ՝ երբոր հայրը ելնէ իւր պաշտած իրըան պատուէ, զայն առաթուր կոխել ուզէ և իրեն իրաւունքը առ ոչինչ դրէ, միթէ թող տալ պէտք է՝ որ ուզածը ընէ նա, որովհետեւ հայրն է. թող տալ պարտ է՝ որքէն՝ որ իւր իրաւունքը ոտքի տակ երթայ. — Ուղիղ Տրամաբանութիւնը և Բնական Օրէնքը կըսեն. Մարդս աղատ է իւր իրաւունքը, որ նուիրական է, պաշտպանել որ և է անձի մը դէմ. իսկ Մէճմաւի աղաբաւեր խմբադիրը կըսէ. Ամեն մարդ պարտաւոր է հնազանդիլ իւր հօրը թէ՛ օրինաւոր և թէ՛ անիրաւ կամաց, որպէս զի անհարազատ (հարաձգաբէն) չըսուի :

Միթէ որդի մը իւր հօրը խաւարեալ զաղափարաց դէմ զնեւոյ՞ն անհարազատ կրնայ մի ըսուիլ. միթէ անոր Ժէղ-ի-օրէն ըրած գործերուն հակառակելովը՝ հարազատ որդի ըսուելէ կը դադրի :

Որդի մը իւր հայրը հոգւով չափ կը սիրէ և կը պատուէ, բայց անոր կարծիքներուն և զործերուն դէշութեան դէմ զնեւոյ՞ն միթէ անհարազատ (հարաձգաբէն) կրնայ ըսուիլ. — Մէճմաւ, Այո՛, կը պատասխանէ : Այն Մէճմաւ որ չը գիտեր կամ չուզեր գիտնալ թէ այն է անհարազատ որդի՝ որ իւր հօրը և նախնեացը Ազգութիւնը, Եկեղեցին կուրանայ. միտ դէր այս վերջի ըսածներուն, ո՛վ Մէճմաւ, այո՛, միտ դէր և ապա Ժէղ-ի-օրէն արքանեակ եղող՝ իւր արգիսկիցները արհամարհողը զատէ, և ազէկ զատէ : Եւ ալ անկէ ետեւ աղատ ես դարձեալ քու արեւակիցներուդ կենդանութեանը սեպհական եղող Սահմանադրութիւնը ծաղըելու, ուզածիդ չափ. միայն թէ զգուշացիր որ դուն ինքդ չծաղրուիս և չարհամարհուիս : Այո՛, Մէճմաւ, թէ և ծանր է քեզի համար, այլ հարկ է վերջապէս բուն հարազատը՝ բուն հարաձգաբէն, և աղազատեաց Ժէղութիւնը՝ ազգասէր անկեղծէն զատել :

Գ. — Մէճմաւ կըսէ “Աստուած կրնար բոլոր բոյսերը վարդ, բոլոր հողը ադամանդ, բոլոր հանքը ոսկի և բոլոր Հայերը լուսաւորեալ ստեղծել. բայց վարդին հետ փուշը, ադամանդին հետ կաւը, և ոսկիին հետ կապարը, և զուցէ Հային հետ ալ Ժէղութիւնը ստեղծած է” :

Մենք վարդին՝ վարդ, փուշին՝ փուշ, ադամանդին՝ ադամանդ, կաւին՝ կաւ, ոսկիին՝ ոսկի, կապարին՝ կապար. լուսաւորեալին՝ լուսաւորեալ, Ժէղութիւնին՝ Ժէղութիւն և անհարազատին՝ անհարազատ կըսենք և չենք ուզեր իրեն պէս Ժէղութիւնութիւնը քաղաքականութեան տեղ, կեղծաւորութիւնը՝ անկեղծութեան, և աշտուութիւնը՝ անաշտութեան տեղ դործածել :

Գ. — Եւ վերջապէս Մէճմաւ մի քանի պառակտիկան խօսքեր յաւելցնէ ետք՝ կըսէ թէ “Ինչ ելեր, բաժանորդ չունենալուդ վերայ կը բողոքէ Աղդին դէմ եւ” : Առանց յիշելու զողջես իւր ասկէ չորս հինգ տարի յառաջ հոգեվարքի մէջ լինելը և մի քանի Ամիրաներու Կրօնական օգնութեամբը նորէն կանդնիլը, Չյիշեր այս, այո՛, չյիշեր անամեն բան որ իւր հաշուին ձեռք չը տար, չմտածեր իւր վերայ և կելնէ առանց աջ և ահեակ նայելու ապօրինաւոր կերպիւ կը տրամաբանէ, իմաստութիւն ծախելով. . . . և հարազատը հարաձգաբէն հետ շփոթելով :

Թէ և չէինք կարծեր ամենեւին որ Մէճմաւի Հայ-Բաբաճը զլուիւր այսչափ խակ լինի, բայց իւր գրչին ծայրէն անհամ, անհեթեթ և այլանդակ յօդուածներ ատեն ատեն բղիւիլը՝ ակն յայտնի ինչպէս շատ՝ նոյնպէս այս անգամ ալ տեսանք :

Իրեն կը թողունք ուրեմն դարձեալ ուղածին չափ իր ճարտարութիւնը բանեցնել՝ տրամաբանելու և զրեւու մէջ, և թերեւս ասոնցմով մի քանի միամիտ բաժանորդներուն բերնի ջուրերը վաղցնել տայ. . . .

ԴԻՄԱԿԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԹՈՒՌՈՅՆ ՄԵԶԻ

ՍԵՐԻՍ ՓԵՏԵՋԵՐՆ

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԵԱՄԲ ՆԱՄԱԿԻՆ ՊԵՏԱՍԻԱՆ

Ողորմած հոգի Յաւիթհարսին Ռեճանոն խմբագիրը Դիմալին հինգերորդ թիւոյն մէջ մեզի դէմ մի նամակ հեղինակած է :

Այս նամակը կարդալով տեսանք զարմայմամբ

որ մեր՝ իրեն պատմական Հանդեսին համար ըսած խօսքը թէ՛ «Բաժանորդի պակասութեան նախին բռնուելով՝ դադարեցաւ և այլն»։ ծանր թուեր է իրեն և նախատական։

Հիտակը չեմք գիտեր ինչ գիտամբ իրեն ծանր կը թուի մեր ըսածը։ չգիտեմք դարձեալ թէ արդեօք ինչ բան փչեր է խելքին՝ որ ելեր մեր Գարոնը նախատելու վատութեան դիմեր է առանց օրինաւոր պատճառներու։

Գոհհիլ մարդու մի թերևս ներելի լինի իմաստակութեամբ շողագողիքը, բայց սակայն, խմբագրի մը, հասարակութեան դատողութեան առջև հրապարակաւ ելնել համարձակող անձի մը բռնած իմաստակ ընթացքը՝ աններելի է, և եթէ ներուի այն՝ թուցիկ Յօդակարութիւն պիտի լինի կարծեմ։

Իրեն վատ ընթացքին՝ վատութեամբ չեմք պատախաճանք, լուսողոյն ընտրելով՝ Յօդակարը և Գարոնը հասարակութեան դատողութեան առջև դնել, միւս ամեն պարբերական թերթերուն պէս, և հասարակութիւնը կրնայ ազատօրէն դատել զանոնք։

Արդ՝ մեք ևս որ հասարակութեան մի անդամ ենք, հաւասար իրաւունք կրնանք ունենալ Յօդակարին վերայ մեր կողմանէ ընդհանուր դատողութիւն մի ընելու և ազատօրէն մեր կարծիքը յայտնելու...

Թէպէտեւ իսկզբանէ անտի չէինք ուզեր և չուզեցինք Յօդակարին դիմելի հանդիմանալով վերաւորել, զանազան առիթներու և միջոցներու մէջ, որ ձեռքերնիս ունէինք... բայց տեսնելով որ Յօդակարը (զրոյց սեպտեմբր համար) իւր չափը կը մոռնայ և Դիմելը երեսը անցուցած՝ խրատիլակի կերպարանք կառնու, կըստիպուինք այս պատճառաւ նախ՝ իւր դիմակին կեղծ լինելը երևան հանել և ապա համարձակ ըսել՝ թէ «Յօդակարը Օմիւռնիոյ մէջ հրատարակուած անճոռնի հանդէս մի, և Օմիւռնիոյ Հանդէսներուն կերպիւ իւրք անպատուութիւն բերող թերթ մի եղած էր։ Այո, եթէ Յօդակարը հանդէս ըսուելու տեղ ունէր՝ թող վկայէ հասարակութեան անկեղծ դատողութիւնը։ Թող վկայէ նաև նոյն ինքն ինքը, Յօդակարի Յարգոյ Խմբագիրը։ Մեր կարծիքը, որուն ազատութիւնը կը պաշտենք, այս է. և մեր խիղճը, որուն էութիւնը կը խոստովանինք, այսպէս կը վկայէ։

Գարունը՝ իւր ծախքին կէսը քսակէն տալը, իրեն անպատուութիւն չսեպեր երբէք, քանզի գիտէ որ Հայ Ազգին Գրաւոր ասպարէզին մէջ

դանուող դողցես բոլոր հանդէսներուն ճակատադիրն է՝ ըրած ծախքը չհանել և կամ երբեմն վերստուիլ, և այս չէ թէ ուրիշ պատճառի համար, բայց եթէ Հայ Ազգին խակութեան և ընթերցանութեան մէջ ետ մնացած լինելոյն և հետևաբար բաժանորդներու նուազութեան համար։ Այս բանիս հակառակ անդողը կրնանք ըսել թէ լոկ Յօդակարի Խմբագիրն է, որ բոլոր Ազգային խմբագիրներու բացառութիւն մի եղած՝ իւր արտաոց բնաւորութիւնը և այլանդակ կարծիքները յայտնել կուզէ իւր նամակաւ, այն Խմբագիրը՝ որ ամօթ կը սեպէ բաժանորդի պակասութիւնը և չըյիշեր որ ինքը իւր ձեռքովը անպատուած է իրեն հանդէսը՝ Պօլսի մէջ ունեցած բաժանորդներէն փոխանակ երկու հինգ մեծիկ վեցամսեայ զին պահանջելով՝ մի հինգ առնելովը, իբր արիտուր իւր անհրաժեշտ Յօդակարին։

Այլ մեք դարձեալ կըսեմք որ եթէ ինք իւր չափը ճանչցած լինէր՝ չպիտի գրէր մեղի դէմ. եթէ ինքզինք չափած լինէր՝ չպիտի համարձակէր այնչափ բարձրէն թուիլ... և գլխիվայր զըլորիլ... բայց դուցէ Եւրոպայի հովերը և Ամերիկա կրկին տեսնելու սաստիկ տեսչը՝ իւր ինչ անձի տէր լինելը մոռնել տուին... կարելի է այս, թէ և Իննետասներորդ Գարուն մէջ՝ նորանշան հրաշքի մի տեղ անցնելոյն տարակոյս չիկայ։

ՊԵՏԵՍԻԱՆԻ ՀԱՐՅՄԵՆ 1284 ԵՐԵՍԻՆ

ԺԴ. — Իսնու համար ո՛րչափ արեւուն մօտեւումք, ոչնչափ տեղի ցուրտ կցնէ։

ԺԴ. — Կըսեն թէ Կէյ-Լիսաք օր մի, թէ և եղելութեան ստուգութեանը երաշխաւոր չենք լինիր, երբոր գիտութեանց վերայ ոչինչ տեղեկութիւն ունեցող իշխանազունի մը, իւր օգտարկիով վեր ելնելը կը պատմէր, զոր կատարած էր 1804ին, անով մինչև 7000 մեթր տեղ բարձրանալը կը յայտնէր և այսչափ բարձրութեան հասնող չեղաւ, կըսէր։ — Ո՛հ, աղաղակեց իշխանազունը, երբոր վերոյիշեալ երևելի քիմիադէտը իւր սթամուլիւնը լնցաց, անշուշտ սաստիկ տաքութիւն զգացիք, արեգակին այնչափ մերձ լինելովնիդ։

Հատ անձեր այսպիսի սոցիտութեան մի վերայ պիտի խնդան։ Բայց գիտնալով նաև որ

մթնոլորտի վերին զաւառներու ցրտութիւնը աւելի ազդու է, դարձեալ կը շփոթի մարդ ջերմութեան աստիճանին նշանակած ցածութեան պատճառը մեկնել, զոր կը զգայ նա՝ երբոր պետէն միայն մի քանի հարիւրաւոր մթն բարձր գտնուի։ Այս պատճառը ըմբռնելը պարզ և դիւրին է։

Կան այնպիսի մարմիններ՝ որոնց կը թափանցէ տաքութիւնը, ճիշդ այնպէս՝ ինչպէս որ լոյսը շատ մարմիններու կը թափանցէ։

Մէլոնին այս յատկութիւնը ունեցող մարմիններու կրիտաթերման (diathermanes) անունը կը տայ, ասոնց հակառակ՝ անթերման անուանած է անոնք՝ որոնք ջերմութենէ դուրի են և կամ ունեցած ջերմութիւնն տկար աստիճան ունի։ Ինչհանրապէս թափանցիկ մարմինները՝ կրկնաջերմական ալ են։ Կազերը կտտարելապէս կրկնաջերմական են, և որչափ պակաս խտութիւն ունենան, այնչափ աւելի։

Ասկէ կեղրակացուի որ օդը քիչ ջերմութիւն կը պահէ իւր մէջ, և իւր ծծիչ զօրութիւնը, որ արդէն երկրի մօտ տկար է, աւելի կը նուազի՝ որչափ որ այն կազը անդայտանայ։ Բայց ասկէ արեղակնային ճառագայթները ևս զայն կը տաքցընեն, ոչ թէ ուղղակի զարնելով, այլ մի տեսակ լուսոյ անդրադարձութենէ, այսինքն երկրային ցոլացումէն (rayonnement), որ քիչ ժամանակուան մէջ կը սպառի, ինչպէս որ դիշեր ատեն մթնոլորտին և նոյն իսկ գետնին ցրտութիւնը կը հաստատէ զայն, և ասիկա մանաւանդ այն ժամանակ յայտնի կը լինի՝ երբ երկինքը ամպերէ ազատ է։ Վերջապէս երբ մէկը, թէ օդապարիկի միջնորդութեամբ և թէ՛ լեռ մի մագլելով օդային բարձր գաւառ մի հասնի, զգայարար իւր արեւուն մերձեանքը երբեք չկրնար իմանալ։ Եւ արդարեւ ինչ տարբերութիւն պիտի ունենայ մի քանի հազարաւոր մթն տեղը՝ այն ահագին հեռաւորութեան քով, որ կը բաժնէ մեր մոլորակը այն աստղէն...

Անկարելի է ճշգրիտ որոշել ջերմութեան աստիճանին իջնալուն և մթնոլորտային կարգերուն բարձրանալուն մէջ եղած համեմատութիւնը։ Մթնոլորտային կարգերն են, եղանակը, կլիման, տիրող հովը, օրւան ժամը և ուրիշ օգեբերութեան պատահումներ, որոնք անդադար փոփոխութիւն կը տան մթնոլորտին։ Բայց սակայն միջին և մերձաւորագոյն հաշիւը գտնուած է այսպէս, Այսրեյեալ գօտիին մէջ բարձրութեան 187 մթնրին համար 1 աստիճան, իսկ Բարեխառն գօտիին մէջ

150 մթնրին համար 1 աստիճան։

Պ. տը Հումպոլտ Քիմպորնսօին վերայ 184 մթնրին համար 1 աստիճան ցածութիւն գտաւ։ Տը Սոսիւր՝ Սպիտակ (Blanc) լեռին վերայ 144 մթնրին համար 1 աստիճան։ Շարլը բնագէտը, իւր 1783ին, ջրային կազով լեցուած օդապարիկով վերացման մէջ, Ռէոմուրի ջերմաչափին 7 աստիճանը զգաց՝ դրեթէ 3000 մթն բարձր եղած ժամանակ։ Պ. Պ. Պառալ և Պիքսօ՝ իրենց այերային լըտեսութեան առաջին ճամբորդութեան մէջ, որ տեղի ունեցաւ 1850 Յունիս 29ին, 5983 մթն բարձրութիւն ունեցող տեղը մի միայն հարիւր աստիճանեան ջերմաչափին 7 աստիճանը գտան։ Բայց իրենց երկրորդ անգամ վերացման ժամանակ, նոյն տարին Յունիսի 26ին, Պ. Կէյ - Լիսաքին պէս, ասոնք ալ մինչև 7000 մթն տեղ բարձրանալով՝ այս բարձր գաւառին մէջ դժուարութիւն քաշեցին Բարեխառնութեան (ջերմութեան աստիճանին) արտաքոյ կարգի մինչև 39 աստիճան ցածնալով։ Այսչափ բարձրութիւն ունեցող տեղ մի՛ երկրային տաքութիւնը հաշիւ հաշ զգալի կը լինի, իսկ արեղական ճառագայթները, այս իրենց հանդիպելու մթնոլորտը այնչափ անդայտանցած, բարակցած է որ, անոր մէջէն, այսպէս ըսենք, առանց իրենց անցքին հետքը ձգելու կանցնին։

ՀԱՐՑՈՒՄՆ.

Ժ.Ե. — Մարդակեր ազգեր կան տակաւին աշխարհի վերայ։

ՀԱՐԱԳԻՐ—ՏՆՕՐԼՆ

Գ. Պ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ

ԶԱՄԻՐՈՒՆԻՒՆԵ

Ի ՏԱՐԱՐԱՆԻ ՏԷՏԷՍԱՆ